ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-7-5-Ա

ք. Երևան 22.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 22-ի նիստում քննարկեց 2024 թվականի փետրվարի 20-ին լիազորված անձ Քրիստինե Գևորգյանի կողմից ներկայացված «Կարինե Ավետիսյան Ժորայի» ԱՁ-ի (ՀՀ, Գեղարքունիք 1514, Չկալովկա փ. 1, շ. 5/5, ԱՄ) «V&V» (No20221490) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում, ԱԾՄԴ-ի 35-րդ դասի ծառայությունների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «VLV CENTRE» և «ՎԻ-ԷԼ-ՎԻ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» («ՎիԷլՎի սենթր» ՍՊԸ, Երևան, Արշակունյաց 69/5 (ԱՄ), N-22571, N-22572, 03.02.2015թ.) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 130-րդ և 132-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշանին նման են համարվում համակցված ապրանքային նշանները: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Տվյալ դեպքում, չնայած առանձին՝ ոչ էական տարբերությունների առկայությանը, հայտարկված նիշի «V» և «V» տառերը և «ELECTRONICS» բառային տարրը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ», նույն այբուբենի տառերով և տառերի բնույթով

պայմանավորված նույն գրելաձևով և դրանց թարգմանությամբ ներառված են ավելի վաղ գրանցված «VLV CENTRE» և «ՎԻ-ԷԼ-ՎԻ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» համակցված ապրանքային նշանների մեջ և հանդիսանում են հիմնական՝ «առաջնային ընկալման» տարրեր: Ինչպես նաև հայտարկված նիշի գրանցումը կարող է մերժվել նույնիսկ այն դեպքում, երբ ապրանքները և ծառայությունները, որոնք նշված են այդ նշանով, նույնատիպ չեն, եթե դա սպառողին մոլորության մեջ է գցում և պատճառ դառնում այդ ապրանքների (կամ ծառայությունների) և ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին: Տվյալ դեպքում ավելի վաղ գրանցված ապրանքային նշանների 35-րդ դասում ներառված ծառայություններն ամբողջությամբ զուգորդվում են հայտարկված նիշի՝ 35-րդ և 37-րդ դասերումներառված ծառայությունների հետ և ունեն սպառողների նույն շրջանակը, քանի որ, մի դեպքում խոսքը վերաբերում է «էլեկտրոնիկայի (էլեկտրատեխնիկայի) և կենցաղային տեխնկայի (սարքերի) մանրամեծածախ առևտրին», իսկ մյուս դեպքում՝ տվյալ ապրանքների վերանորոգմանը, տեղադրմանը (տեղակայմանը) և տեխնիկական սպասարկմանը, որոնք առևտրային պրակտիկայում մատուվցում են բոլոր՝ էլեկտրատեխնիկայի խանութների կողմից և ունեն սպառողների նույն շրջանակը: Ուստի, տեսնելով հայտարկված նիշը, սպառողը կարող է կապ ենթադրել՝ կարծելով, որ հայտարկված նիշը պատկանում է նույն՝ «ՎիԷլՎի սենթր» ՍՊ ընկերությանը և դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող՝ «VLV CENTRE» և «ՎԻ-ԷԼ-ՎԻ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ապրանքային նշանների նկատմամբ, որոնց մասին տեղեկությունն առկա է https://vlv.am և https://www.facebook.com/vlvcentre ինտերնետային կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է

ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում, ԱԺՄԴ-ի 35-րդ դասի ծառայությունների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «VLV CENTRE» և «ՎԻ-ԷԼ-ՎԻ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» («ՎիԷլՎի սենթր» ՍՊԸ, Երևան, Արշակունյաց 69/5 (AM), N-22571, N-22572, 03.02.2015թ.) համակցված ապրանքային նշաններին:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Քրիստինե Գևորգյանի կողմից ներկայացված «Կարինե Ավետիսյան Ժորայի» ԱՁ-ի «V&V» (No20221490) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ